է՛ւ յամենայն եպիսկոպոսաց եւ կղերիկոսաց է՛ւ ի համօրէն հաւատացելոց այնր ժողովրդեան յանուն, զի զՀայս եւ յականէ յանուանէ զվաճառականս Մեծութեան Ձերում մտադիւր յանձն առնիցեմք եւ ի մերմէ կուսէ ըստ պատշաճից բանս զնոցին զայլեւայլ իրաց բազում հաւաստեաւ առաջի քո արկանիցեմք. այս ինքն խնդրի բազում թախանձանօք, զի քրիստոնեայ եւ կաթողիկէ Հայք եւ որք յանուն կաթողիկէ Եկեղեցւոյ ընդ հնազանդութեամբ հռովմէական քահանայապետի՝ որ է հայր համօրէն քրիստոնէից, կեան եւ խոստանան օգնութեամբն Աստուծոյ կեալ, թէպէտ եւ ի քո կաթողիկէ անունն են ամենեւին յանձն եւ ապաստան, այլ պաշտօնեայք քո որ յԱրեւելս ընդ նոսա որպէս ընդ անհաւատս գնան եւ առ անհաւատս ունին զնոսա. զի յանուանի շահաստանի անդ յՈրմուտ (*իմա* Ormus), *որ ի Պարսից ծոցին կայ, յորում յայլոց քրիստոնեայ վաճառականաց վասն տուրեւառիկ վաճառաց մտիցն եւ ելիցն՝ ի սակ տասանորդք միայն պահանջին, ի նոցունց Հայոց նոյն սակ կրկին չափով որպէս յանհաւատիցն պահանջի, ի մեծ վնաս նոցին է՛ւ իրաց է՛ւ համբաւոյ. թէպէտ եւ յամենայն նահանգս եւ յաշխարհս քրիստոնեայ թագաւորաց եւ իշխանաց, որպէս եւ առ մեզ իսկ ի մերում նահանգստին Անկոնայ նոքին ընդ այլ քրիստոնեայս ի նմին հաւասար իրաւունս վայելիցեն:*

Առաջի առնեն մեծաւ աղերսիւ եւ զայն զի նոքին առանց ինչ յանձանց պատճառս տալոյ